

## VI. ԳՈՐԾԱՌՈՒԹԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2012թ. ընթացքում հրավիրվել է ՀՀ ՎՊԽ 15 նիստ: Նիստերի ընթացքում քննարկվել է 59 հարց և արդյունքում ընդունվել է 72 որոշում, այդ թվում՝ 32 նորմատիվ և 40 անհատական:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է բարձրագույն կրթությամբ կադրերի գերակշռությամբ՝ 85.9%: Աշխատակիցների 43.4%-ը տնտեսագետներ են: Աշխատողների 26.3%-ը կազմում են տղամարդիկ, իսկ 73.7 %-ը՝ կանայք:

ՀՀ ԱՎԾ-ում 2012թ.-ին աշխատանքի է ընդունվել 44 մարդ, նրանցից՝

- ՎՊԽ-ի անդամ՝ 1,
- Ծառայության գրասենյակում՝ 1
- Քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ 30,  
*այդ թվում՝ արտամիջոցային կարգով՝ 16,*
- Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում՝ 11,
- տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներ՝ 1:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմում 2012թ.-ին աշխատանքից ազատվել է 55 մարդ,  
*նրանցից՝*

- ՎՊԽ անդամ՝ 1,
- Քաղաքացիական ծառայողներ՝ 43,
- Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի նշանակվածներ՝ 10,
- տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներ՝ 1:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբեր	Վերապատրաստվել են	Ատեստավորվել են	Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին
Բարձրագույն	1	2	-
Գլխավոր	23	22	-
Առաջատար և կրտսեր	61	74	-
<b>Ընդամենը</b>	<b>85</b>	<b>98</b>	-

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու նպատակով ՀՀ ԱՎԾ աշխատակազմում անց է կացվել 22 մրցույթ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում՝ 1 մրցույթ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից համապատասխան դասային աստիճաններ է շնորհվել 26 քաղաքացիական ծառայողի, աշխատակազմի ղեկավարի կողմից՝ 56 քաղաքացիական ծառայողի:

Կատարելագործվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ ԱՎԾ միջև էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման արդյունավետությունն ապահովելու նպատակով ներդրված «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ» (ՄՌ-ԿՏՀ) ծրագիրը:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) հայտի համար հաշվարկվել է 2014, 2015, 2016 թվականներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար սահմանվող պաշտոնային դրույքաչափերը և հավելավճարներն ըստ հիմնական աշխատավարձի հաշվարկման սանդղակի համապատասխան գործակիցների:

ՀՀ ԱՎԾ նախագահի՝

- 24.12.2012թ. թիվ 175-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի 2013թ. աշխատատեղերի ցուցակը,

- 27.12.2012թ. թիվ 181-Ա հրամանով հաստատվել են ՀՀ ԱՎԾ և աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների ներքին կառուցվածքը և հաստիքային միավորների թվաքանակը՝ հաստիքացուցակը, ՀՀ ԱՎԾ աշխատակիցների 2013թ. հունվարի 1-ից գործող պաշտոնային դրույքաչափերը և հավելավճարները,

- 24.12.2012թ. թիվ 14-Մ հրամանով հաստատվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Մարդահամարի գործառնական ստորաբաժանման հաստիքային միավորների թվաքանակը (հաստիքացուցակը) և պաշտոնային դրույքաչափերը:

Ի դեմս ՀՀ ԱՎԾ նախագահի և աշխատակազմի ղեկավարի՝ կնքվել են աշխատանքային պայմանագրեր և համաձայնագրեր Մարդահամարի վարչությունում, «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում և քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում նշանակված աշխատակիցների հետ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծության նպատակով միասնական համակարգի ստեղծման ծրագրով հաստատված ձևերին համապատասխան:

Իրականացվել է ՀՀ ԱՎԾ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց փոխկապակցված անձանց կողմից ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացվող հայտարարագրերի ժամանակացույցի վերահսկում:

Պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում անհատական հաշվառման ներդրումն ապահովելու նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՍԱՊԾ տարածքային կենտրոն է ներկայացվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի, Մարդահամարի վարչության և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ապահովագրված անձանց՝ մինչև պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում հաշվառելի ընկած ժամանակահատվածում ձեռք բերած ապահովագրական (աշխատանքային) ստաժի հաշվարկման մասին տեղեկատվություն:

«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումն ապահովելու նպատակով ֆինանսների նախարարություն է ներկայացվել անհրաժեշտ տեղեկատվություն՝ ըստ ներկայացված ձևի:

Կառավարական թիվ 3 շենքի էլեկտրոնային անցագրային համակարգի անհատական մագնիսական քարտերի ծրագրավորման և տպագրության նպատակով ՀՀ կառավարության աշխատակազմի հանձնարարությամբ կազմվել է անհրաժեշտ տեղեկատվական փաթեթ:

Ուսումնա-արտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի

պետական ճարտարագիտական համալսարանի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Ռուս-հայկական Սլավոնական համալսարանի, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի, Երևանի «Գլաճոր» համալսարանի, Գավառի պետական համալսարանի, Գյումրու պետական մանկավարժական համալսարանի, «ԷԼԼՆԱՐ» ռուս-հայկական դիստանցիոն տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի, Երևանի «Մովսես Խորենացի» համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի՝ թվով 278 ուսանողների համար:

Բարեխիղճ աշխատանքի համար ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով 2 քաղաքացիական ծառայող, իսկ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով 6 քաղաքացիական ծառայող և 5 աշխատակից խրախուսվել են շնորհակալագրերով:

ՀՀ Նախագահի 23.05.2012թ. թիվ ՆՀ-118-Ա հրամանագրով ՀՀ ՎՊԽ անդամ Գագիկ Գևորգյանը պարգևատրվել է Անանիա Շիրակացու մեդալով: